

պիսկոպոս կը փափագի իւր Պատրիարքութեան օրով՝ փնասարեր երկպառակութիւնը բնաջինջ առնել և խաղաղութիւնը և շինութիւնը վերահաստատել Ազգին մէջ, եթէ կուզէ Ազգին գոյութիւնը և պատիւը պահպանել և նորավարկը օտարաց առջ բարձրացնել, եթէ ունի կամք ազգին օգտակար հանդիսանալ և նորագէտ ի լաւն զարգացման առաջնորդել, հարկ է որ ամենայն հոգևով աշխատինախ՝ նորահոգեկան զգացումները զարթուցանելոյ և նոր մէջ հետզհետէ տարածուելոյ երես բռնած խանգարեալ բարոյականութիւնը վերանորոգելոյ, ուսումնարանաց արդիւնաւոր յառաջադիմութեան օգնելոյ, եկեղեցականաց բարեկարգութեան և եկեղեցւոյ կանոնաց անխախտ պահպանութեան հսկելոյ:

Այն փորձը՝ որ մի քանի վառարկորհուրդ անձինք փորձեցին իւր նախորդի օրով՝ Տաճկաստանի Հայր իւր միութեան կեդրոն եղող սրբավայրէն հեռացնելոյ, թէև չյաջողեցաւ, բայց քիչ փաս չը տուաւ ազգին ընդհանրութեան օգտին: Աջմիածնէն հեռանալով չէ որ ազգը պիտի կարողանայ պահպանել իւր ամբողջութիւնը և գոյութիւնը, այլ ինչպէս ասկից առաջ՝ նոյնպէս և այսուհետև՝ նորահոգ որդիական սիրով կապուած մնալով:

Այս կը յուսամք և կակնկալեմք ահա Ներսէս Արքեպիսկոսի Պատրիարքութեանէն, և ասոր համար է ահա որ՝ ինչպէս Պօլսոյ ազգայնոց, նոյնպէս և մեզ չափազանց ուրախութիւն պատճառեց նորա ընտրութիւնը:

Ըմենաբարին Ըստուած տայ՝ Նորին Արքազնութեան կար՝ զօրութիւն և յա-

ջողութիւն գործելոյ զբարին և ինչ որ Ազգի ընդհանրութեան և Այկեղեցւոյ ամբողջութեան շահն կը պահանջէ, և արդիւնաւորուի իւր բարի խորհրդոց մէջ:

Այս է մեր բարեմաղթութիւնը և փափագը:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿՔ ԲԻԻԶԱՆԳԵԱՆԵ.

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱԻԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐԻԻ ՀԱՅՈՑ Կ. ՊՈԼՍՈՑ.

(Շարունակութիւն և վերջ)

Եւ եղկելի լալազին գալով որպէս զԱդամ յարտաքսեալ ի դրախտէն մնացի ի Պօհճա ատասին Բ ամիս, և արզուհալ ուղարկեցի ի Կոստանդնուպօլիս Թուրքին մեծին թէ հրաման շնորհեա ինձ ազատութեան աստի և զնալ ի սուրբ Երուսաղէմ: Յաւուր միում կիրակի առաւօտ ի ծագիլ արևու եկն Աէգիրէն մէկ Չաւուշ, ունէր հրաման ազատութեան և զնալ ի սուրբ Երուսաղէմ, և պատվիրեալ էր ճանապարհել զմեզ մինչ Ռատոս. ելար անտի, զօհութիւն մատուցի, և երկրպագեալ ամենասուրբ Երրորդութեան հօր և որդւոյ՝ և հօգւոյն սրբոյ ամեն, ուրախութեամբ մէկ փոքրաւորով Պ օրն հասանք ի Սախրղ. Պ օր նստանք, ոչ զոյր նաւ պատրաստական, զի Անկլէզի մեծ նաւ մի կայր անդ Խոռասնդի և Պ նաւ էր առեր Փռանցոյ լի ցորենով, ի Սախրղ գատարից զցորենանքն և զնաւքն վաճառեաց. ի յահէ նորա ոչ շարժէին նաւք, և ես յոյժ ահ ունէի ի նոցանէ, սիրտս միշտ դող էր, զի էչի նոցա ահ տլաւ թէ այս դրամն թէ ի ծով թէ ի ցամաք ուր և իցէ՛ կանոնն քեզնէ. միշտ աղօթեի առ Ըստուած և հայցէի պահել ի նոցա պատահմանն: Յետ Պ աւուր եկն մէկ Թարթան գէթ՝ Եմի Խոռասնդի ահուն հեռու նստաւ իլիմանէն, որ չէր երևէր, նորա սանտալով նորա զարթանն եկաւ դուրս. հարցաւ Չալուշն ինչ ազգ ես. ասաց Փռանցէ եմ. ո՞ր կու զնաս. զնամ ի Ռա-

տոս բան ունիմ, անտի Ֆոանցա կու գնամ, Ուրոյ՛հետե Ֆոանցե ես, կու հաւատամք քեզ՝ զի Ֆոանցոյ թագաւորն հետ մեր Հօնքեարին յոյժ բարեկամք են, ի նոցանէ մեզ զարար չը կա. և Մալթէզի Խոռասանդն չի մօտիր զմեզ, անփոյթ կուգնամ. և ես այլ հաւատացի նմա, զի քրիստոնեայ է սուտ չի խօսիր: Ի՞նչ տանք նաւիդ վարձս մինչ Ռատոս, ասաց մարդազրուս Ա Ա ոսկի, ինձանից կերէք խմեցէք մինչև հասանինք Ռատոս. և հանցի տլի Գ ոսկի և մտաք ի նաւն ըշտապով թէ Ինկիզ Խորսանդ չի տեսնէ զմեզ. իբրև յերեկոյն եղև, Ե ժամ զիշերոյ էանց, երաց յիւքէններն ուղղեաց զնաւն ի ճանապարհ, որն ու զիշերն գնացաք հասաք մէկ իլիման մի, չեմ գիտեր ինչ կասեն՝ որ Աէնէտիկաց ազգ էր. այն տեղն զահրան առաւ՝ կերակուր զինչ որ պիտոյ էր, միւս օրն ելաք անտի առաւօտն հասաք ի Տէկիրմէնիկն, Չաւուշն ասաց, ես ելանեմ դուրս խապար մի առնեմ. տեսանեմ որպէս է ճանապարհն. հետ զապիթանին ելան ի դուրս. զապիթանն եկաւ, Չաւուշն չեկաւ: Ապիթանն ի գալ բանին երկաթն առաւ, վեր եբաց զյիւքէնն, ելաւ ի վերայ ծովուն վարեաց զնաւն. «Ես հարցա, ո՞ւր է Չաւուշն. լեզու չեմ՝ գիտեր, իշարէթով նա ասաց կէլիւր. տեսա հեռացա ի ցամաքէն, ապա մնացի անձար. Բ օր այլ գնացաք փոքրր ատա մի, հանց դուրս զփոքրաւորս իմ՝ քաշեաց ուժով տարաւ այն ատան ձգեց, և ես ահա և դողութեամբ կայի թէ զՉաւուշն և յետոյ զողայն հանց, ապա զիս ի՞նչ պիտի առնէ, ծո՞վն մի կու ձրգէ, կու սպանանէ՞ մի, գերեցնէ՞ մի. քրիստոնեա է տէ՛յի զվզիս խաշն ցոյց տըվի թէ միթէ զնշան տէրունական տեսանելով գերի չի տանէ, յափշտակեաց էառ զսուրբ խաշն, և թէրբի հէյկպէս կաշով շինած և կղպարած էառ, որ ունէի մը նորա եղեալ՝ Բ մատանի՝ մէկն էլմաստ և միւսն զիւմրիթ՝ եպիսկոպոսութեան Եղիսազար Վաթուղիկոսն էր տվէր, և ՃԶԸ ոսկի մուշամպա քսակով, և ծոցիս սահէթն, Է ջուխթ չամաշուր, Թ և Է սրմայու մահրամա, և ամրացուցեալ փոքր կղպարով կղպեր էի և ըզբանայիքն առ յիս էր. առաւ զիւր գամարան ետրի՝ Առեալ էի թէ Ֆոանկն սուտ չի խօսիր, և

յոր խաչակնքես զերեսդ և քրիստոնէ լինին զիտանա, ոչ զապրանքն կառնու, ոչ զինք, բայց այն ոչ խաչի ողորմեցաւ և ոչ արտասուացաւ. Հասանք մութում, դուրս հանց զիս, և այլ յոյս ունէի թէ յառաջմէ կու ցանկայի Հոռոմ գնալոյ, պէքէ յաստուծոյ վեր սուրբ առաքելոցն Քրիստոսի աստուծոյ մերոյ սրբոյն Պետրոսի և սրբոյն Պօղոսի աղօթք բերին զմեզ. այս յուսովն կու մխիթարէի Նոքա խօսէին հետս, ես չէի գիտեր թէ զինչ կասէին, կայի պշուցեալ անասնրման խեղճ պանգուխթ ի մէջ ծովու մտատանջ լինելով: Ելեալ անտի նաւեաց ի զիշերի, առաւօտն հանդիպեցաք Աէնէտիկու տօնամային, թօփ նետեցին, դարձաւ դարբիթանն սանտալով գնաց մեծաւորին ողջունեաց, չեմ գիտեր զինչ խօսեցան. եկեալ ի նաւն դարբիթանն, մինչ ի Մէսինա այլ տեղ չի հանդիպաք ի վերայ ծովու. մէկ քրիստոնեայ մեռեալ մի տեսաք, Հոգոց հանգուցելոց ասաք և մի տվաք ողորմին: Միւս զիշերն հասաք Մէսինա, հանց զմեզ ի Նազարէթ, ոչ նոքա զիմ լեզուս զիտեն, և ոչ ես նոցա լեզուն գիտեմ. զարբիթանն ելաւ գնաց չեմ՝ գիտեր թէ ինչ խօսեցաւ նոցա. Մեսինացիք այլ մէկ օտա մի տլին Նազարէթ, մարդ մօտս չի գար. ես նոցա գնամ, նոքա փախէին. միւս մարդոյն մօտ կերթայի՛ նա այլ կու փախէլի: Իբրև երեկոյ եղև, կայի զարմացման, զգուռն կղպեցին վրայէս. առաւօտ եղև, ամենեցուն օտային դուռն բացին, զիմ օտային դուռն չի բացին. յետ երից աւուրց եկին վերնագուռն մարդիք, և Ֆոանցէ գօնջօրն հարցաւ դրամ ունի՞ս. չունիմ ասացի, զինչ դրամ կայր՝ առաւ դարբիթանն. մի վախեր չի կորիր քո դրամն: Այլ յոյժ անձարակ և հեղոյր աչացս իմ արտասուս անդադար, Բերին մէկ մարդ, միթէ ահա այս մարդն քեզ խրզմէթ թող անէ, գկերակուրդ եփէ և զհանդերձը լրվանայ, և զինչ որ խարժի պիտոյանայ՝ Ֆոանցէ գօնջօրն տայէ:

Եւ Սախրզու պազրկեանն պատմեց թէ Հոսմին պատրիարքն Սախրզու Հոռմլնուն հետ կաթողիկ Հոռմման ազգ է Աէնէտիկու, որք Սախրզ բնակեալ են, նոցա հետ տաւա ունէին, Է Ը հոգի ի պանդարեցին, կու սպաննեմ տէ՛յի, և զեկեղեցիք Հրուսիք զարթարին, և ոչ հառն զեկեղեցի նոցա:

Եւ ես մնացի անդ Ե ամիս. պիտի ուղարկէին ի Բայերմոն. բայց Ըսպանիոս թագաւորն, Աստուած կենդանութիւն տա իւրան, զիր էր ուղարկեր թէ՛ ուղարկեցէք ի Քուանցա Աւհ. կայսրն արքային: Ոմանք այլ ասին թէ Կոստանդնուպօլոյ Քուանցու էջի պէն այլ զիր է զրիր թէ ուղարկեցէք ի Քուանցա, չեմ տեղեակ: Ա թարթան մի կուզար ի Մարչիլիա լի ցորենով, և Քուանցէ դոնօրն եր գմեղ ի այն նաւն. մինչ Ա ամիս ի Մարչիլիա: Նոյն ժամայն տարեալ եղին ի զընտան անողորմ գերեաց նման, ոսո իմ զարկին Փաանտուա երկաթէ շղթայիւք: և կուանա փռահինցին, և ըզմորուք և զկուլակս ածիլեցին, զոր Հայոց ազգն չեն ածիլեր Հասեալ մորուք, զի մեծ պակասութիւն է: բնաւ չէի ածիլեր, յոյժ յոյժ դժարս եկաւ: Եւ մերկացուցին և զմնացեալ ուռուպաս և զիրբերս և թըխթերս նորա ափն: Եւ իբրև երեկոյ եղև, երկրորդ ժամ անցաւ երեկոյեան, եկեալ կրկին Հանեցին երկաթէն շղթայիցն, տարեալ ներքին բանդն խոր, մնացի անդ Խ օր լայղին: Եկն նոցա թէրճիսանն և ետուր աւետիս ուրախութեան, եթէ ահա մեր մեծ արքայէն հրաման եկաւ որ գնաս ի Փարեզ, անտի ուղարկէ զքեզ ձեր յերկիրն. յոյժ ուրախացեալ օրհնեցի զարքայն Հանդերձ արտասօզ: Սինեօս Թընթաւը հագոյց մեզ Ա Ճիւտաիբէօս, Ա Ըսպիք, Ա Տիպա, Ա Սօլ, Ա մազ, Ա շարօ, Ա Ետրմուլլուխ, և Մուսու Նէպի անուն քրիստոնէն Բ կրտրձօք հետ եղեր մեզ բանեցին, և կտրճէի թէ Փարեզ բերին: չի բերին Փարեզ, և տարեալ ի վանքն սուրբ Վիքայէլու, զոր բարեխօս լիցի առ աստուած վասն թագաւորին կենդանութեան ամեն: Մնացի անդ Գ տարի, լաւ զթած մարդ էր Փէոփոսիէօսն. Ա Վօփոէս մի կու բերեր կերակուր, աւնուն Վօփոէս ճուլէն, ապա յոյժ անողորմ էր, զոր մարդ խապար չունէր: Մինչև տարի ու կէս զգարս և զժամ լաւ պահեցի, որպէս ի մանկութենէ ի վեր պահեալ էի ի հայոց կրօնիբն: Գրուան մեկ փոքր ծակ կայր, օրն չորս հինգ անգամ կուզար տնաղ կաններ, նախատէր՝ հրէտիկ ճըզմաթիք կոչելով: Ես չէի գիտեր թէ հրէտիկ ճըզմաթիքն ինչուն կասեն. հրէտիկ սակաւ հասկացա, զէրէ մէք այլ հերձվածողաց հրէտիկոս կա-

սներ: Յարիտի, Նէսթորի, Մակեդոնի, Այլ խօսից յոյժ վերաւորէի, լեղու չեմ գիտեր, կուլայի զիչեր ցերեկ, վիրաւորելու՝ Բ օր Գ օր քաղցած կու մնայի և բերեալ էին Ա սուրբ Այոս Մարիամու Աստուածածնա պատկերն, և Ա Քրիստոսի խաչկութեան պատկերն, և Ա խաչ օպէնիթ՝ զի նօրօք մխիթարէի. չարութենէն զպատկերքն կու տաներ և զիչերն լոյս չէր տար և միշտ խաւար: Երբոր Փէոփոսիէօսն գալու լինէր, շուտով դուան կու բանար և փեմճէրէն և պատկերքն դու խաչը կու բերէր, իբր թէ անմեղս լինելով Հարցանէի թէ վասն էր կասես այդպէս, ուստի նձ զկաթոլիկութիւնն որ այնպէս առնեմ որ անգամ մի այլ չասես. հապա զպահուց օրն չես ուտեր խմեր, ճըզմաթիք հրէտիկոս ես Պահաց օրն որ ուտեմ խմեմ նէ՛ կաթոլիկ Քուանցէ կու լինիմ հալաւ, մեղքը վիզդ ասացի. այնուհետև կերա զինչ որ բերին. և անդ կայր մեր եղած բանդի վերին Ա Վուսու մի Փրոզօնի մեծ պահուցս քառասորդաց՝ հաւու աղանոյ միս կուտեր, զոսկերքն կօթ թափէր մեր փեմճէրէն. կու զարմանայի թէ սքառօրպէս զաղանդ է բռնածներն. այն մարդ այլ աւնն առաւօտ կու սպասէր ինձ հայէի ի վեր. ըզչէնն ի զիսոյս կու ընուր. ասացի պահապանին և Փէոփոսիէօսին, այլ չելից. աստուած իւրեան մեղաց թողութիւն շնորհեցէ. հէլէ ճուլէ ուրիշ տեղ զնաց հանգստացա, ուրիշ Քուանցի դր ի Սարմօ Փոէսն կու բերէր. չէր խօսեր, շնորհակալ եմ. միտանք վանացն իբրև սուրբ աստուածային են, զոր տէր աստուած հաստատ պահէ ամեն:

Եւ յետ Գ ամաց Յունվար ամսոյ Ը օրն չորեքշաբթի եկն ևհաս յարքայէն Գ մարդ զմեզ բերին ի յարքայանիստ մայրաքաղաքն Փարեզ, եւ զին ի բանտն ներքին. յոյժ տկարութիւն ունէի ի ստամոքէ և ի հագէ, գիչերն յոյժ նեղէր հազն զոր յուշաթափէի նորա: Սինէօս Աօլէնեօս յոյժ ողորմած զթած մարդ էր. միշտ հալս հարցանէր և բժիշկ բերէր. Աստուած թագաւորին և սինէօս Պինիստրին կեանքն երկար սրացէ որ հրամայեցին բժշկել զմեզ պէս պէս զեղօք. բժիշկն ողորմութեամբն յատուծոյ բժշկեաց. Խ օրն մնացի ներքի բանտ. հրաման եղև արքայէ միջի քաւա-

րանի բանան եմ այժմ. մի՞թէ Աստուած զիւրեան մեզան քաւեսցէ. այսուհետեւ չեմ գիտեր թէ այլ ինչ գալոց է այս սեւագիր զլինյոս. զիտեմ և ինձէն գիտեմ ճշմարտապէս որ այս ամենայն վասն իմ ծովացեալ մեղացս է. զի յոյժ անթիւ մեզս իմ և զանօրէնութիւնս իմ իբրև զատեղիս երկնից բազմութեամբ և որպէս զուազ առ ամեն ծովու. զի յոյժ հպարտացեալ էի և փառասիրութեան հոգով պերճացեալ էի. զօրէնս և զպատուիրանս յԱստուծոյ մոռացեալ էի կամաւ ոչ ընկալալ զլուծ ապաշխարութեան. գոհանամ յԱստուծոյ ամենակալէն որ Աստուած արժան արար զայս չորս տարիս և ամիս ու կէս ապաշխարանք քաշելոյ. այնպէս կու հաւատամ որ չի կորուսան՝ ը քաշածս. զի հրամայեաց տէրն մեր Յիսուս Քրիստոս Աստուածն մեր թէ մազ ի զլինոյ ձերմէ ոչ կորիցէ մինչև ցոյցօր ուլ որ ինձ թշնամութիւն արար ինձ վատութիւն չարկամութիւն արար, ոմանք մատնելով, ոմանք չարչարելով, ոմանք նախատելով, ոմանք կողոպտելով, ոմանք տնազ առնելով և արհամարհելով, ամենայն չար կամաց որ վասն իմ մեղանչեցին՝ ինքն ամենակարօղն Աստուած զնոցա մեղացն թողութիւն շնորհեսցէ աստ և ի հանդերձելու մն մի յիշեսցէ զմեզս նոցա ամեն. եւ ես կամաւս և յօժարութեամբս այսուհետեւ հեռանամ ի Թուրքն տրվեալ փառացն և մանսուպէն, ոչ ցանկանամ Ըստամպուլու պատրիարքութեանն և կամ սուրբ Երուսաղէմայ պատրիարքութեանն բնաւ ամենեկն Թուրքին հրամանան. մեծութիւն չի ինկորեմ չընթուներմ. վասն հաստատութեան բանիցս այս ձեռամբ իմով զըրեալ զիրս ձեռագրեսցի և վկա յերկինս դասք հըրեշտակաց և յերկիրս դասք սրբոց վկայ լիցին առաջի ահեղ ատենին Քրիստոսի յԱստուծոյ մերոյ. քանզի ոչ կարեմք Բ տէրանց ծառայել. փառաց յաշխարհիս ծառայելով հօգիս կորուսի. այսուհետեւ հետեւիմ զհօգիս փրկութեան և խնդրեցի գտանել զուղիղ ճանապարհն կենաց, գտանել և ընթանալ ճշմարտութեամբ զհետն Քրիստոսի Աստուծոյ մերոյ և ցանկալ փառաբերել ըզվերին փառացն և արքայութեանն, որ է անզրաւ յաւիտեանս յաւիտենից ամեն.

Մատիւ.

Ա Ջ Ն Ի Ի Գ Ո Ր Ծ Մ Ը.

Եթէ երբէք մարդկային կեանքը քաղցրութիւն մ' ունի, այն ալ ազգային ծառայութիւնք և բարերարութիւնք են.

Ազնուական գերպատանէ անձ մը՝ Վսեմ. Աբրահամ պէյ Երամեան, որ իւր ազգին թշուառ ազգակիցներուն և օտարաց իսկ մարդասիրական բարիքներ ըլրած է բազմիցս առանց իւր անունն հրատարակելու, այս անգամ՝ ևս առաջարկութեամբ Վսեմ. Սիմոն պէյի Մագաուեան 1500 լիրա շնորհեր է Ազգին Պէշիկթաշի և Օրթազիւզի գերեզմանատանց քարերը հողով ծածկելու և Պատրիարքի ընտրութեան ու հաստատութեան ծախքը հոգարու համար.

Այսպիսի անզուգական և առատասիրտ անձի մը անունն ու յիշատակը ոչ միայն բովանդակ Ազգին համար օրհնութեան արժանի է, այլ և իր բաւունք է ըսել թէ՛ ամեն Հայ որ կտիրէ իւր Ազգն ու անով կուզէ փառաւորուիլ, պարտաւոր է իւր բովանդակ կենաց մէջ օրհնութեամբ ու քաղցրութեամբ յի երկար կեանք մտղթելու Երամեան ազնուազարմ գերպատանին և նորա միակ փառքըն եղող պոյազատ Աբրահամ պէյի.

Այս առթիւ կարծեմք արդարութեան և իրաւանց պարտք մը կատարած կըլլամք, եթէ իբրև հրապարակային թերթի մէջ ևս ի զիմաց ընդհանուր Ազգին խոնարհաբար երախտագիտութիւն և շնորհակալութիւննիս յայտնեմք Վսեմ. Աբրահամ պէյի որոյ անունը ամեն Հայու քաղցր է լսել և օրհնել.

Ոչ սակաւ գովեստից և շնորհակալութեան արժանի է նաև Վսեմ. Սիմոն պէյ, որ Ատրբուլութեան զրուխ կանգնելէ և յօգուտ ազգին անձանձիր աշխատելէ զատ հարկ եղած բարեխօսութիւնը կընէ Վսեմ. Աբրահամ պէյի այսպիսի հանգանակութեամբ Ազգին դժբաղդ վիճակին օգնելու համար.

Թող լսեն ազգին մեծատունները և օրինակ առնուն, եթէ կուզեն որ ազգը դարուց ի դարս իրենց անունն ալ փառաւորէ:

Չորեքշաբթի օր Խառն ժողով գումարեցաւ ի Ղալաթիա ընդ նախագահութեամբ Ամեն Ներսէս Արքայանի

Սիկիկիոյ վիճակաց ծրարիրը՝ զոր նախորդ վարչութիւնը խմբագրած և պատրաստած էր ժողովն հանդերձ զիտողութեամբ ընդունելով վաւերացուց

Ժողովը նկատելով որ Զմիւռնիաբնակ ազգայինը շարունակ կը թախանձեն զՊատրիարքարան Զմիւռնիոյ ազգային ժողովոց ընտրական գործողութիւնքը կատարելու համար որոշեց Պալլքէտէրի նորընտիր առաջնորդ Գեր. Տ. Մատթէոս Ծ. վարդապետ տեսուչ խրկել ի Զմիւռնիա

Խառն ժողովը վերջնական կերպով որոշեց Պէշիկթաշի և Օրթաղուղի գերեզմանատանց տապանաքարերը հողով ծածկել ըստ կամոց Անհ. Սուլզանին և հրահանգ զրկել յիշեալ թաղերու թաղ. Խորհրդոց՝ նոյնին գործադրութեան համար

Երզնկայի առաջնորդ Գեր. Տ. Գրիգորիս Ծ. Վարդապետը, որ ժամանակէ մ' ի վեր Պոլիս կը գտնուէր իւր վիճակը վերադառնալու հրաման տուցաւ:

Մշոյ Ս. Կարապետի վանուց միաբանութիւնը Սահմանադրապէս վանահայր ընտրած ըլլալով զԳեր. Տ. Մամբրէ Արքայան արքեպիսկոպոսը, որ միաբան է յիշեալ վանուց և ընտրութիւնը տեղեկագրած ըլլալով ի պաշտօնէ առ Ազգ. Վարչութիւնն, Խառն ժողովը Մամբրէ Արքայանի վանահայրութիւնը ընդունելով վաւերացուց և նոյնը հաղորդեց առ Նորին Արքայանութիւն

Ահա այսպէս կը լցուի Ս. Կարապետի վանուց միաբանութեան և Մշոյի ազգայնոց բաղձանքը՝ Ուստի շնորհաւորելով զՆորին գերապատուու-

թիւնը, մեծ յոյս ունիմք որ Մամբրէ Արքայան հայրենասիրական ոգով վաւեալ ըստ ամենայնի պիտի աշխատի Ս. Կարապետի վանուց բարեկարգութեանը, որ վերջին տարիներս ցաւալի վիճակի մը ենթարկեալ էր: Մամբրէ Արքայանի յառաջադիմական ջանիցը մեծ զօրավիգ կրնան ըլլալ յիշեալ վանուց ճոխութիւնը ու միաբանութիւնը՝ որոնք նշանակութիւն ունեցած չէին բնաւ նախկին վանահայր օրով: Պարծանօք կըսեմք թէ մեր ազգային վանուց ողբալի վիճակին վրայ լաւ տեղեկութիւն ունի Մամբրէ Արքայան իրրև Հայաստանցի վարդապետ և զիտէ թէ որով եղանակաւ վանքերն օգտակար կրնան ըլլալ Ազգին: Այս տեսութեամբ մենք, ինչպէս նաև բոլոր ազգայինք, իրաւունք ունիմք միշտ մեծամեծ բարիքներ և հիմնական բարեկարգութիւններ ակնկալելու Նորին Արքայանութենէն, յօգուտ և ի շինութիւն Ս. Կարապետի վանուց:

Հայրենիք թիւ 197, Ապրիլ 27:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԷ.

Երբեմն հինգ տարի ի շուրջ և Վարպէտն Պ. ի ժամանակ տասն տարւոյ չափ ևս ի Փարիզ Աւստրիոյ դեսպանութիւնը վարող Ա. սեմ. Պարօն տը շիււպներ անուանի քաղաքադէտ՝ այսօր (Մայիս 31) այսր ի Ս. Լըմիածին Ա. և հ. Հայրապետի տեսութեան եկաւ և արժանաւոր մեծարանօք հիւրասիրուեցաւ:

Վսիկն ուղեկից էր Ֆինլանտիոյ բնակիչներէն երեկելի և մեծահարուստ կալուածատէր Պ. Կրմանացի Պարօն Պէրնարտ Տ'Իւքսթիւլ, որք ի միասին՝ Մայր Աթոռոյս նշանաւոր վայրաց ևս այցելեցին, և կէսօրէն յետոյ վերադարձան յԱրևան: